ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախորդ դասի շրջանակներում ամփոփեցինք՝

- փախստականի կարգավիճակի տրամադրման ներառման պայմանների քննարկումը,
- ինչպես նաև ներկայացրեցինք՝
- փախստականի կարգավիճակի տրամադրման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված լրացուցիչ հիմքերը:

Այս դասում կներկայացնենք բացառման պայմանները, ինչպես նաև կքննարկենք «երրորդ ապահով երկրի» ինստիտուտը, որը միջազգային պրակտիկայում և ՀՀ օրենսդրությունում կիրառվում է որպես ապաստան չտրամադրելու հիմք:

Բացառման պայմաններ

1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Դ», «Ե» ու «Զ» մասերը սահմանում են հիմքեր, որոնց առկայությունը բացառում է անձին փախստականի կարգավիճակի տրամադրումը: Դրանցից «Դ» մասի դրույթները Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառելի չեն և, ուստի, չեն քննարկվի:

Մյուս երկու դրույթները վերաբերում են այն անձանց, ովքեր չունեն միջազգային պաշտպանության կարիք («Ե» մաս) կամ արժանի չեն միջազգային պաշտպանության («Զ» մաս): Մասնավորապես, անձը կհամարվի միջազգային պաշտպանության ոչ արժանի, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա՝

- կատարել է պատերազմական հանցագործություն կամ մարդկության կամ խաղաղության դեմ ուղղված հանցագործություն,
- մեղավոր է ճանաչվել ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարքների կատարման մեջ,
- նախքան ՀՀ-ում փախստականի կարգավիճակ հայցելը ՀՀ տարածքից դուրս կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն:

Այժմ անցնենք Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Ե» ու «Զ» մասերով սահմանված համապատասխան բացառման պայմանների քննարկմանը:

Անձինք, ովքեր չունեն միջազգային պաշտպանության կարիք: 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Ե» մասը սահմանում է, որ «Կոնվենցիայի դրույթները չեն կիրառվում այն անձի նկատմամբ, որն այն երկրի իրավասու մարմինների կողմից, որտեղ նա ունեցել է բնակության վայր, ճանաչվել է այդ երկրի քաղաքացիությունն ունենալու հետ կապված իրավունքներ ու պարտականություններ ունեցող»: Այս դրույթի

«քաղաքացիությունն ունենալու հետ կապված իրավունքներ ու պարտականություններ ունեցող» եզրույթը ենթադրում է, որ համապատասխան անձը պետք է ունենա համապատասխան երկրում մշտական բնակության իրավունք և քաղաքացիներին սովորաբար շնորհվող իրավական պաշտպանություն (ներառյալ՝ պաշտպանություն արտաքսումից): Հարկ է նկատել, որ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ բացառման հիմք՝ պայմանավորված միջազգային պաշտպանություն տրամադրելու անհրաժեշտության բացակայության հանգամանքով: Սակայն հաշվի առնելով

օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված վերապահումն առ այն, որ միջազգային պայմանագրերով նախատեսված նորմերն առավելություն ունեն «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի նկատմամբ, 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Ե» մասը, փաստական հանգամանքների բավարար ծավալի առկայության դեպքում, կարող է անմիջականորեն կիրառվել իրավակիրառ մարմինների կողմից:

Պատերազմական հանցագործություն կամ մարդկության կամ խաղաղության դեմ ուղղված հանցագործություն կատարած անձինք: Ըստ 1951 թ. Կոնվենցիայի և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի՝ նման արարքների որակումը պետք է իրականացվի համաձայն «նման հանցագործությունների կապակցությամբ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ստեղծված միջազգային փաստաթղթերի»: Այս առումով առավել կարևոր փաստաթուղթն է Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը (Հռոմի կանոնադրություն) ու դրա հիման վրա ընդունված «Հանցագործությունների տարրերը»: Այս փաստաթղթերը համապատասխան միջազգային հանցագործությունների մասով ժամանակակից միջազգային իրավունքում ամենավերջին կոդիֆիկացիան են2: Սակայն որոշ դեպքերում կարիք կլինի դիտարկել նաև այլ միջազգային փաստաթղթեր:

Այսպես, **պատերազմական հանցագործությունների** մասով պետք է ուշադրություն դարձնել 1949 թ. Ժնևի կոնվենցիաներին ու դրանց 1977 թ. Արձանագրություններին (դրանցում որպես «լուրջ խախտումներ» որակվող արարքները ռազմական հանցագործություն են), ինչպես նաև ԿԽՄԿ կողմից հրապարակված «Սովորութային միջազգային մարդասիրական իրավունք» ուսումնասիրությանը (այն որոշ դեպքերում լրացուցիչ հստակեցնում է, թե համապատասխան փաստաթղթերում հատկապես որ արարքներն են որակվում որպես ռազմական հանցագործություն)3:

Միջազգային իրավունքում ուղղակիորեն որպես մարդկության դեմ հանցագործություն որակվող արարքներից բացի՝ որպես **մարդկության դեմ ուղղված հանցագործություն** պետք է դիտվեն նաև ցեղասպանությունն ու խոշտանգումը: Ինչ վերաբերում է **խաղաղության դեմ հանցագործություններին**, ապա խոսքն ագրեսիայի մասին է, որը կարող է իրականացվել ռազմական գործողությունների համատեքստում՝ պետության կամ պետականատիպ կառույցի բարձր ղեկավարության կողմից:

ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարքներ: Նման արարքների առավել վառ օրինակներ են միջազգային հանցագործությունները, որոնք, սակայն, ընկնում են նախորդ բացառման հիմքի տակ: Տեսականորեն այն կարող է կիրառելի լինել պետության բարձրաստիճան պաշտոնյաների կամ կազմակերպված խմբերի ղեկավարների կողմից ՄԱԿ-ի սկզբունքներին ու նպատակներին հակասող այլ արարքների դեպքում, սակայն դրա պրակտիկ հնարավորությունը բավականին ցածր է: Այս բացառման պայմանը, թերևս, երբևէ չի կիրառվել միջազգային պրակտիկայում: Մի շարք պետությունների դատական պրակտիկայում հաստատվել է, որ նույնիսկ միջազգային պայմանագրերով քրեականացվող արարքները (միջազգային բնույթի հանցագործությունները, օրինակ՝ թմրամիջոցների թրաֆիքինգը), չնայած դրանց ծանր հետևանքներին, չեն համարվի ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարքներ, քանի դեռ դրանք էապես չեն ազդում միջազգային անվտանգության ու խաղաղության պահպանման վրա կամ մարդու հիմնարար իրավունքների լուրջ խախտում չեն (վերջին դեպքում դրանք հավանաբար կհանդիսանան **մարդկության դեմ ուղղված հանցագործություն)**:

Անձ, ով ՀՀ-ում փախստականի կարգավիճակ հայցելուց առաջ ՀՀ տարածքից դուրս կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն: Այս բացառման հիմքն առավել պրոբլեմատիկն է և հաճախ կիրառվողը:

Այս պայմանի կիրառման համար առանցքային նշանակություն ունեն «**ծանր հանցագործություն**» և հատկապես «**ոչ քաղաքական բնույթի**» եզրույթները: Հանցագործությունը ծանր որակելու համար հարկ է դիտարկել միջազգային պրակտիկան, այլ ոչ թե սոսկ դրա որակումը արարքի կատարման երկրում5: Ընդհանուր առմամբ, հանցագործության ծանրությունը պետք է որոշվի ելնելով արարքի բնույթից, պատճառված վնասից, դրա համար սահմանված պատժից, աշխարհի տարբեր երկրներում դրա որակումից (այն է՝ արդյո՞ք այն որակվում է որպես ծանր հանցագործություն): Այս առումով էական նշանակություն կունենա արարքի որակումը ՀՀ քրեական օրենսգրքի շրջանակներում: Որոշ նշանակություն կարող է ունենալ նաև այն, թե արդյոք համապատասխան անձը դրսևորել է երկարատև քրեական վարքագիծ: Միևնույն ժամանակ, եթե անձը համապատասխան արարքի համար արդեն կրել է պատիժը կամ ենթարկվել է համաներման կամ ներման, ապա, որպես կանոն, սույն բացառման պայմանը կիրառելի չէ:

Հանցագործությունը ակնհայտորեն համարվում է **ոչ քաղաքական բնույթի**, երբ դրա շարժառիթները չունեն քաղաքական ենթատեքստ (օրինակ՝ շահադիտական կամ անձնական դրդապատճառներով կատարված արարքներ): Այսինքն՝ քաղաքական հանցագործությունները (օրինակ՝ կառավարման համակարգի, կառավարության կամ պետական քաղաքականությունների փոփոխությանն ուղղված հանցանքները) չեն ընկնում սույն բացառման պայմանի տակ: Սակայն այն փաստը, որ անձը հանցանքը կատարելիս ունեցել է որոշակի քաղաքական շարժառիթներ, ինքնաբերաբար չի ենթադրում, որ նրա նկատմամբ չի կիրառվի սույն բացառման հիմքը: Այսպես, հանցանքը չի համարվի քաղաքական Կոնվենցիայի իմաստով, եթե այն ակնհայտորեն անհամաչափ է հետապնդվող քաղաքական նպատակին (մասնավորապես՝ զուգորդվել է պաշտոնյա կամ զինվորական չհանդիսացող անձանց հիմնարար իրավունքների խախտումներով), կամ դրա ու հետապնդվող քաղաքական նպատակի միջև չկա բավարար պատճառահետևանքային կապ6: Այսպես, որպես կանոն, ահաբեկչական գործողությունները չեն կարող համարվել քաղաքական հանցագործություն, հատկապես եթե զուգորդվել են բնակչության շրջանակներում զոհերով7:

Նաև հարկ է հաշվի առնել, որ այն հանցանքները, որոնք անձը ստիպված է եղել կատարել ծագման երկրից փախչելու համար (օրինակ՝տրանսպորտային միջոցի գողություն) չեն համարվի ոչ քաղաքական բնույթի՝պայմանով, որ դրանք համաչափ են նպատակին (այս առումով, օրինակ՝ ինքնաթիռի առևանգումը դժվար թե համաչափ լինի փախուստը ապահովելու նպատակին):

Անձնական պատասխանատվության հարցը: Բացառման պայմանների կիրառման առնչությամբ կարևոր է հաշվի առնել, որ դրանք կիրառվում են միայն այն դեպքում, երբ համապատասխան անձն անձամբ պատասխանատու է խնդրո առարկա արարքների համար: Խնդրո առարկա արարքներ իրականացնող խմբում կամ պետական մարմիններում անձի մասնակցությունը բավարար չէ նրա նկատմամբ բացառման պայմաններ կիրառելու համար: Անհրաժեշտ է, որպեսզի անձն ունենա գիտակցված անձնական մասնակցություն այդ արարքներին (ընդ որում՝ բարձրաստիճան պաշտոնյաների դեպքում բավարար կլինի նրանց թողտվությունը, եթե այն հանդիսացել է համապատասխան հանցանքների կատարման կարևոր պայման)8:

Երրորդ ապահով երկիր

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ապաստանի տրամադրումը կարող է մերժվել այն փախստականին, որը ժամանել է երրորդ ապահով երկրից: Այդպիսի երկիր է համարվում այն երկիրը, որտեղ չկա

դաժան ու անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի հիմնավոր վտանգ, ինչպես նաև չկան օրենքով նախատեսված ներառման պայմաններ կամ իր ծագման երկիր վերադարձվելու վտանգ: Այս դրույթն ընդհանուր առմամբ համահունչ է Կոնվենցիայի ընդունված մեկնաբանություններին, որոնց համաձայն՝ **երրորդ ապահով երկիր է համարվում այն երկիրը, որտեղ ապահովված է Կոնվենցիայով նախատեսված պաշտպանություն**: Այս առումով, օրինակ, ԱՄՆ-ն չի ճանաչվում այդպիսի երկիր, քանի որ չի ապահովում չվերադարձելիություն այնպիսի երկրներ, որտեղ առկա է անձի նկատմամբ խոշտանգումների վտանգ9: Գերմանիան ու Ֆրանսիան էլ չեն համարվել անվտանգ երկրներ, քանի որ դրանցում բավականաչափ երաշխավորված չէր Կոնվենցիոն պաշտպանությունը մասնավոր անձանց կողմից հետապնդումների ենթարկվող փախստականների համար10:

Օրենքի կիրառման ժամանակ հարկ է հաշվի առնել, որ, համաձայն Կոնվենցիայի, չվերադարձելիության սկզբունքը վերաբերվում է ոչ միայն երկրներին, որտեղ առկա է դաժան ու անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի հիմնավոր վտանգ, այլև երկրներին, որտեղ կարող է խախտվել անձի կյանքի իրավունքը:

Այս դասում մենք քննարկեցինք բացառման պայմանները՝ միջազգային պաշտպանության կարիք չունենալն ու որոշակի արարքների ուժով դրան արժանի չլինելը: Մասնավորապես, ներկայացրեցինք միջազգային հանցագործություն, ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարքներ կամ ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն կատարած անձանց ապաստանի մերժումը, ինչպես նաև «երրորդ ապահով երկիր» ինստիտուտը:

Հաջորդ դասում կքննարկենք՝

- փախստականի կարգավիճակի դադարեցման հիմքերը,
- ապաստանի դադարեցման հիմքերը:

ԲԱՌԱՐԱՆ

Պետական մարմին – ցանկացած կառույց կամ պաշտոնյա, ով ներպետական իրավունքի համաձայն դե ֆակտո տվյալ պետության հանրային իշխանության (այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մակարդակում) մարմին կամ պաշտոնատար անձ է, միջազգային իրավունքի իմաստով կհամարվի տվյալ պետության մարմին կամ պաշտոնյա: Որևէ նշանակություն չունի, թե արդյոք տվյալ մարմինը կամ պաշտոնյան իշխանության որ ճյուղն է ներկայացնում, ինչ տեղ կամ պաշտոն է գրավում պետական իշխանության համակարգում, հանրային կառավարման որ մակարդակում է գործում (դաշնային,

փարածքային, համայնքային և այլն): Նշանակություն չունի նաև այն, թե արդյոք ներպետական իրավունքը խնդրո առարկա կառույցին կամ պաշտոնյային հսկակ որակում է որպես պետական մարմին կամ պաշտոնյա՝ քանի դեռ նրան փաստացի տրված է համապատասխան կարգավիճակ և հանրային իշխանության որոշակի գործառույթ (օրինակ՝ ՀՀ կենտրոնական բանկը միջազգային իրավունքի համաձայն ճանաչվում է ՀՀ պետական մարմին, քանի որ ՀՀ օրենսդրությամբ հանդիսանում է «պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ»):

Ծագման երկիր – միգրացիոն հոսքերի (կանոնավոր կամ անկանոն) սկզբնաղբյուր հանդիսացող երկիր: Փախստականների միջազգային իրավունքում այս եզրն օգտագործվում է որպես ընդհանուր տերմին՝ փախստականի քաղաքացիության երկիրն ու քաղաքացիություն չունեցող փախստականի մշտական բնակության երկիրը մատնանշելու համար:

Բացառման պայմաններ (դրույթներ) – դրույթներ, որոնցով մերժվում է միջազգային պաշտպանության տրամադրումն այն անձանց, ովքեր այլապես բավարարում են փախստականի կարգավիճակին ներկայացվող չափորոշիչներին: «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թ. կոնվենցիայում բացառման մասին դրույթները կարելի է գտնել 1-ին հոդվածի «Դ», «Ե» և «Զ» կետերում:

Միջազգային հանցագործություն – առավել լուրջ հանցագործություն, որը քրեականացվում է անմիջապես միջազգային իրավունքի նորմերով՝ անկախ ներպետական իրավունքում դրա քրեականացումից, ինչպես նաև կարող է անմիջապես ընդդատյա լինել միջազգային քրեական դատարանին կամ տրիբունալներին: Ներկայումս որպես միջազգային հանցագործություն անվերապահորեն ճանաչված են ռազմական հանցագործությունները, մարդկության դեմ հանցագործությունները, ցեղասպանությունը և ագրեսիան:

Միջազգային բնույթի հանցագործություն (կոնվենցիոն հանցագործություն) – հանցանքներ, որոնց քրեականացումը նախատեսված է միջազգային պայմանագրերով: Դրանք անմիջապես չեն քրեականացվում միջազգային իրավունքով, այլ ենթակա են քրեականացման ազգային օրենսդրության մակարդակով: Որպես կանոն, դրանք այնպիսի արարքներ են, որոնք սպառնում են միջազգային հանրության շահերին: Նման հանցագործությունների օրինակ են թմրամիջոցների և մարդկանց թրաֆիքինգը, ծովահենությունը, առանձին ահաբեկչական գործողությունները և այլն:

ԿԽՄԿ – Կարմիր խաչի միջազգային կոմիտե՝ մարդասիրական կազմակերպություն, որը հիմնադրվել է 1863 թ. հունիսի 24-ին Ժնևում: 1949 թ. Ժնևյան չորս կոնվենցիաների և 1977 ու 2005 թվականների դրանց լրացուցիչ արձանագրությունների անդամ երկրները ԿԽՄԿ-ին տվել են միջազգային և ներքին զինված հակամարտությունների տուժածների պաշտպանության մանդատ: Այդ տուժածների թվին են պատկանում պատերազմի արդյունքում վիրավորվածները, ռազմագերիները, փախստականները, քաղաքացիական բնակչությունը:

Մարդկության դեմ հանցագործություն – «Մարդկության դեմ հանցագործություն» եզրն առաջին անգամ կիրառվել է Մեծ Եղեռնի առնչությամբ, սակայն հետագայում ցեղասպանությունն առանձնացվել է որպես առանձին հանցատեսակ: Մարդկության դեմ հանցագործությունը միջազգային հանցագործության տեսակ է, որը կարող է կատարվել ինչպես խաղաղ ժամանակ, այնպես էլ ռազմական գործողությունների շրջանակում, և դրսևորվում է քաղաքացիական բնակչության դեմ ուղղված լայնածավալ կամ կանոնավոր դիտավորյալ հարձակման միջոցով: Հարձակումը կարող է ներառել այնպիսի արարքներ, ինչպիսիք են սպանությունը, բնաջնջումը, ստրկացումը, վտարումը կամ բռնի տեղահանումը, ազատությունից զրկումը, խոշտանգումը, բռնաբարությունը, սեռական ստրկությունը,

մարմնավաճառությամբ զբաղվելուն հարկադրելը, հարկադիր հղիությունը, հարկադիր ամլացումը, խմբի հետապնդումը քաղաքական, ռասայական, ազգային, էթնիկական, մշակութային, կրոնական, գենդերային կամ այլ անիրավաչափ հիմքերով, մարդկանց բռնի անհետացումը, ապարտհեյդը, մեծ տառապանք, մարմնական լուրջ վնասվածքներ պատճառող կամ հոգեկան կամ ֆիզիկական առողջությունը վնասող նմանօրինակ այլ անմարդկային միտումնավոր արարքները (տե՛ս Միջազգային քրեական դատարանի 1998 թ. կանոնադրության 6-րդ հոդվածը):

Ցեղասպանություն – Միջազգային հանցագործության թերևս առավել լուրջ տեսակը: Միջազգային իրավունքում ցեղասպանություն են ճանաչվում ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խումբ լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ կատարված այնպիսի գործողությունները, ինչպիսիք են, օրինակ, այդ խմբի անդամների սպանությունը, նրանց մարմնական լուրջ վնասվածքներ կամ հոգեկան վնաս պատճառելը, կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը, այդ խմբի շրջանակներում մանկածնությունը կանխելուն միտված միջոցներ ձեռնարկելուն, երեխաներին մի խմբից մյուսը բռնի փոխանցելուն (տե՛ս «Ցեղասպանության հանցագործությունը անխարգելելու կամ պատժելու մասին» 1948 թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածը, Միջազգային քրեական դատարանի 1998 թ. կանոնադրության 6-րդ հոդվածը):

Խոշտանգում – խոշտանգում է ճանաչվում պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով: Սա չի ներառում միայն այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից կամ հատուկ են դրանց կամ կապված են դրանց հետ (տե՛ս «Խոշտանգումների և այլ դաժան անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածը): Ըստ որոշ մասնագետների խոշտանգումը միջազգային հանցագործություն է: Ամեն դեպքում, այն մարդու իրավունքների միջազգային իրավունքի լրջագույն խախտում է (տե՛ս «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թ. միջազգային դաշնագրի 7-ին հոդվածը, Ժնևի 1949 թ. կոնվենցիաները):

1949 թ. Ժնևի կոնվենցիաներ – միջազգային մարդասիրական իրավունքի հիմքը հանդիսացող թվով չորս կոնվենցիաներ, որոնք սահմանում են պատերազմից անձանց պաշտպանության հիմնական սկզբունքներն ու կանոնները: Կոնվենցիաները վավերացրել են 180-ից ավելի պետություններ: Առաջին երկու կոնվենցիաները գործող բանակում վիրավորների և հիվանդների, վիրավոր և հիվանդացած ծովայինների, ինչպես նաև նավաբեկյալների վիճակը բարելավելու, երրորդը՝ ռազմագերիների հետ վարվելու կանոնների, չորրորդը՝ պատերազմի ժամանակ խաղաղ բնակչության և նրանց իրավունքների պաշտպանության մասին են: Ըստ Ժնևյան կոնվենցիաների՝ մասնակից պետությունները պարտավորվում են հետապնդել և պատասխանատվության ենթարկել կոնվենցիաների դրույթները խախտողներին: Այդ դրույթները պարտադիր են նաև չեզոք պետությունների համար:

1977 թ. Արձանագրություններ – 1977 թ. ընդունվել են Ժնևյան կոնվենցիաների երկու լրացուցիչ արձանագրությունները՝ «Միջազգային զինված հակամարտություններից տուժածների պաշտպանության մասին» (Առաջին արձանագրություն) և «Ոչ միջազգային բնույթի հակամարտություններից տուժածների պաշտպանության մասին» (Երկրորդ

արձանագրություն): Առաջին լրացուցիչ արձանագրությունն կոնվենցիաների ընդլայնել կիրառման է ժնևյան ոլորտը՝ հակամարտող կողմերի թվում մատնանշելով նաև իրենց ինքնորոշման իրավունքի համար պայքարող ժողովուրդներին:

ՄԱԿ-ի նպատակներ – Միավորված ազգերի կազմակերպության նպատակները սահմանված են ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին հոդվածով և ներառում են միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովումը, վեճերի խաղաղ լուծման ապահովումը, ազգերի բարեկամական հարաբերությունների զարգացումը՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքի վրա, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ մարդասիրական բնույթի միջազգային խնդիրների լուծմանը, ինչպես նաև բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի տարածմանը և քաջալերմանը ուղղված միջազգային համագործակցություն իրականացումը:

ՄԱԿ-ի սկզբունքներ – Միավորված ազգերի կազմակերպության նպատակները սահմանված են ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածով և ներառում են պետությունների ինքնիշխան հավասարության, միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման, վեճերի խաղաղ կարգավորման, ուժի գործադրման կամ դրա սպառնալիքի արգելման, ՄԱԿ-ի գործողություններին օժանդակության, ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները:

Պատերազմական հանցագործություն – պատերազմական հանցագործությունները միջազգային հանցագործության տեսակ են, որոնք կարող են իրականացվել զինված հակամարտության համատեքստում: Պատերազմական հանցագործություններ են համարվում, մասնավորապես, պատերազմի օրենքների կամ սովորույթների լուրջ խախտումները: Այդ հանցագործությունների թվին առանց սահմանափակման պատկանում են Ժնևի 1949 թ. կոնվենցիաների դրույթների լուրջ խախտումները՝ ներառյալ կանխամտածված սպանությունը, խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը, ռազմական գործողություններին այլևս չմասնակցող անձանց ապօրինի կալանքը կամ վտարումը, ինչպես նաև Ժնևի 1949 թվականի չորս կոնվենցիայով պաշտպանվող ունեցվածքի ոչնչացումը ու յուրացումը: Պատերազմական հանցագործություններ կարող են կատարվել քաղաքացիական կամ ռազմական անձնակազմերի կողմից: Մանրամասների համար տե՛ս Միջազգային քրեական դատարանի 1998 թ. կանոնադրության 8-րդ հոդվածը:

Ագրեսիա – ագրեսիան միջազգային հանցագործության տեսակ է, որը կարող է իրականացվել ռազմական գործողությունների համատեքստում՝ պետության կամ պետականատիպ կառույցի բարձր ղեկավարության կողմից: Այն ներառում է այնպիսի արարքներ, որոնք իրենց բնույթով, լրջությամբ և ծավալով կոպիտ կերպով խախտում են ՄԱԿ-ի Կանոնադրությունը: Նման գործողությունների օրինակներ են՝ պետության զինված ուժերի կողմից այլ պետության տարածքի ռմբակոծումը, այդ տարածք ներխուժելը կամ դրա վրա հարձակվելը, դրա օկուպացիան կամ անեքսիան, այդ պետության զինված ուժերի վրա հարձակումը, այլ պետության դեմ ագրեսիայի համար սեփական տարածքը տրամադրելը, պետության կողմից կամ անունից այլ պետություն զինված խմբեր, անկանոն զորքեր կամ վարձկաններ ուղարկելը, որոնք կիրականացնեն վերը նշված արարքներից որևէ մեկը և այլն: Մանրամասների համար տե՛ս Միջազգային քրեական դատարանի 1998 թ. կանոնադրության 8.1 հոդվածը և ՄԱԿ-ի Գերագույն վեհաժողովի թիվ 3314 (XXIX) բանաձևն առ 14.12.1974 թ.:

Երրորդ ապահով երկիր – ծագման երկրից և ապաստանի հայցման երկրի բացի այլ երկիր, որտեղ անձի համար չկա կյանքի, ազատության, ինչպես նաև խոշտանգումների կամ դաժան ու անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի հիմնավոր վտանգ, ինչպես նաև չկան օրենքով նախատեսված ներառման պայմաններ, իր ծագման երկիր

վերադարձվելու կամ այնպիսի երկիր վտարվելու կամ վերադարձվելու վտանգ, որտեղ առկա են նշված վտանգները:

1. UNHCR Handbook and Guidelines On Procedures and Criteria for Determining Refugee Status under the 1951 Convention and the 1967 Protocol Relating to the Status of Refugees, Reissued Geneva, December 2011, «« 140-188.

2. UNHCR, Background Note on the Application of the Exclusion Clauses: Article 1F of the 1951 Convention relating to the Status of Refugees.

3. UNHCR, Considerations on the "Safe Third Country" Concept, EU Seminar on the Associated States as Safe Third Countries in Asylum Legislation, Vienna, 8 - 11 July 1996.

4. UNHCR, Guidelines on International Protection: Application of the Exclusion Clauses: Article 1F of the 1951 Convention relating to the Status of Refugees, HCR/GIP/03/05, 4 September 2003

5. UNHCR Note on the Interpretation of Article 1E of the 1951 Convention relating to the Status of Refugees.

6. Al-Sirri v Secretary of State for the Home Department and DD (Afghanistan) v Secretary of State for the Home Department [2012] UKSC 54, 21.11.2012.

7. Pushpanathan v. Canada (Minister of Citizenship and Immigration), [1998] 1 S.C.R. 982.

8. Bundesrepublik Deutschland v B and D (Joined Cases C- 57/09 and C-101/09) [2011] Imm AR 190 (“B and D”), ECJ (Grand Chamber), 09.11.2010.

9. Regina v. Secretary of State for the Home department ex parte Adan; Regina v. Secretary of State for the Home Department ex parte Aitseguer, UK House of Lords (Judgments of 19 December 2000) (2001) 2 WLR 143–169, T.I. v. U.K., (App. No 43844/98), ECtHR (Third Section), 07.03.2000.

10. Л. В. Павлова, А. В. Селиванов, Международно-правовой статус беженца, Пособие для студентов вузов, Минск: Тесей, 2006, Глава 4. Международно-правовая регламентация режима беженцев, электронный режим доступа: http://evolutio.info/content/view/1287/187/ [2016-06-11 5:30:54

1. 1951 թ. Կոնվենցիայի համաձայն ո՞ր արարքը կատարելը չի բացառում անձին փախստականի կարգավիճակ տրամադրելը՝

Ա) Պատերազմական հանցագործությունը կամ մարդկության կամ խաղաղության դեմ ուղղված հանցագործությունը – սխալ է: Նշված արարքները միջազգային հանցագործություններ են, որոնց կատարումը փախստականի կարգավիճակի տրամադրման մերժման հիմք է, իսկ դրանք կատարած անձը՝ ոչ արժանի միջազգային պաշտպանության:

Բ) ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարքը – սխալ է: Չնայած միջազգային պրակտիկայում այս հիմքը, թերևս, գործնականում չի կիրառվում, սակայն, տեսականորեն, նման արարքը փախստականի կարգավիճակի տրամադրման մերժման հիմք է, իսկ այն կատարած անձը՝ ոչ արժանի միջազգային պաշտպանության:

Գ) Ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործությունը – ճիշտ է: Ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն կատարելը թույլ է տալիս մերժել փախստականի կարգավիճակի տրամադրումը միայն այն դեպքում, եթե այն կատարվել է ՀՀ տարածքից դուրս և նախքան ՀՀ-ում փախստականի կարգավիճակ հայցելը: ՀՀ տարածքում կատարված արարքները կարող են հանդիսանալ կարգավիճակի դադարեցման հիմք, սակայն այդ կարգավիճակի տրամադրումը մերժելու հիմք չեն:

Դ) Նախքան ՀՀ-ում փախստականի կարգավիճակ հայցելը ՀՀ տարածքից դուրս ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործությունը – սխալ է: Նման արարք կատարելը փախստականի կարգավիճակի տրամադրման մերժման հիմք է, իսկ այն կատարած անձը՝ ոչ արժանի միջազգային պաշտպանության:

2. 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Ե» մասի համաձայն՝ անձը ճանաչվում է միջազգային պաշտպանության կարիք չունեցող, եթե նա՝

Ա) Որևէ երկրի կողմից ճանաչվել է այդ երկրի քաղաքացիությունն ունենալու հետ կապված իրավունքներ ու պարտականություններ ունեցող – սխալ է: 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Ե» մասի համաձայն՝ բացառման պայման է ոչ թե որևէ երկրի կողմից նման ճանաչումը, այլ միայն այն երկրի կողմից, որտեղ անձը հաստատել է բնակություն:

Բ) Նախքան փախստականի կարգավիճակի տրամադրումը ՀՀ կամ որևէ այլ պետությունում ստացել է քաղաքացիություն և օգտվում է այդ պետության պաշտպանությունից – սխալ է: Նախքան փախստականի կարգավիճակ ստանալը որևէ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում հարկ կլինի այդ պետության մասով դիտարկել ներառման պայմանների առկայությունը: Ուստի նման քաղաքացիությունը հարկ կլինի դիտարկել ոչ թե Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Ե» մասում սահմանված բացառման պայմանի, այլ նույն հոդվածի «Ա» մասում սահմանված ներառման պայմանների համատեքստում:

Գ) Այն երկրի իրավասու մարմինների կողմից, որտեղ նա ունեցել է բնակության վայր, ճանաչվել է այդ երկրի քաղաքացիությունն ունենալու հետ կապված իրավունքներ ու պարտականություններ ունեցող – ճիշտ է: 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Ե» մասի համաձայն՝ բացառման պայման է քաղաքացիությունն ունենալու հետ կապված իրավունքներ ու պարտականություններ ունեցող ճանաչվելն այն երկրի կողմից, որտեղ անձը հաստատել է բնակություն: Գործնականում դա հենց այն երկիրն է լինում, որտեղ անձը հայցում է ապաստան:

Դ) Փախստականի կարգավիճակի տրամադրումից հետո ՀՀ կամ որևէ այլ պետությունում ստացել է քաղաքացիություն և օգտվում է այդ պետության պաշտպանությունից – սխալ է: Փախստականի կարգավիճակի տրամադրումից հետո որևէ պետության քաղաքացիություն

ստանալը և այդ պետության պաշտպանությունից օգտվելը կարգավիճակի դադարեցման, այլ ոչ թե դրա տրամադրումը մերժելու հիմք է:

3. 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Զ» մասի շրջանակներում անձի արարքի որակումը որպես պատերազմական հանցագործություն կամ մարդկության կամ խաղաղության դեմ ուղղված հանցագործություն՝ իրականացվում է համաձայն՝

Ա) ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի դրույթների – սխալ է: Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Զ» մասի համաձայն արարքների որակումը պետք է իրականացվի համաձայն «նման հանցագործությունների կապակցությամբ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ստեղծված միջազգային փաստաթղթերի»: Կոնվենցիան կիրառվող փաստաթղթերի շրջանակը չի սահմանափակում վավերացված միջազգային պայմանագրերով: Ավելին, այդպիսի սահմանափակում չի կարելի ենթադրել, քանի որ դրա արդյունքում Կոնվենցիայի համապատասխան դրույթը տարբեր պետություններում անխուսափելիորեն կստանար տարբեր բովանդակություն՝ կախված տվյալ պետությունների կողմից վավերացված միջազգային պայմանագրերի շրջանակից:

Բ) Միջազգային քրեական դատարանի կանոնադրության դրույթների – սխալ է: Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը առանցքային նշանակություն ունի համապատասխան արարքների որակման համար, քանի որ համապատասխան միջազգային հանցագործությունների մասով ժամանակակից միջազգային իրավունքում ամենավերջին կոդիֆիկացիան է: Սակայն որոշ դեպքերում կարիք կլինի դիտարկել նաև այլ միջազգային փաստաթղթեր, օրինակ՝ 1949 թ. Ժնևի կոնվենցիաներն ու դրանց 1977 թ. Արձանագրությունները:

Գ) Նման հանցագործությունների կապակցությամբ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ստեղծված բոլոր վերաբերելի միջազգային պայմանագրերը – սխալ է: Կոնվենցիան կիրառվող փաստաթղթերի շրջանակը չի սահմանափակում միջազգային պայմանագրերով: Անշուշտ, հենց միջազգային պայմանագրերն ունեն առանցքային նշանակություն համապատասխան արարքների որակման համար: Սակայն որոշ դեպքերում հարկ է դիտարկել նաև այլ աղբյուրներ, այդ թվում՝ պարտադիր իրավաբանական ուժ չունեցող փաստաթղթեր:

Դ) Նման հանցագործությունների կապակցությամբ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ստեղծված բոլոր վերաբերելի միջազգային փաստաթղթերը– ճիշտ է: Համապատասխան արարքների որակման համար առանցքային նշանակություն ունեն միջազգային պայմանագրերը (առաջին հերթին՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը): Սակայն որոշ դեպքերում հարկ է դիտարկել նաև այլ աղբյուրներ, այդ թվում՝ պարտադիր իրավաբանական ուժ չունեցող փաստաթղթեր: Այսպես, ԿԽՄԿ հրապարակած «Սովորութային միջազգային մարդասիրական իրավունք» ուսումնասիրությունը որոշ դեպքերում լրացուցիչ հստակեցնում է, թե համապատասխան փաստաթղթերում հատկապես որ արարքներ են որակվում որպես ռազմական հանցագործություն (օրինակ, հետազոտության Կանոն 113-ը հաստատում է, որ զոհվածների դիակները խեղելը համարվում է միջազգային հանցագործություն, թեև դա ուղղակիորեն ամրագրված չէ որևէ միջազգային պայմանագրում):

4. 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Զ» մասի շրջանակներում մարդկության դեմ ուղղված հանցագործություն են որակվում՝

Ա) Միջազգային փաստաթղթերում որպես մարդկության դեմ հանցագործություն ճանաչված արարքները – սխալ է: Որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն առաջին հերթին որակվում են հենց մարդկության դեմ հանցագործությունները: Սակայն որոշ այլ միջազգային հանցագործություններ, որոնց օբյեկտը նույնպես մարդկությունն է, թեև ֆորմալ առումով ներառված չեն «մարդկության դեմ հանցագործություններ» հանցակազմում, այդուհանդերձ, մարդկության դեմ ուղղված հանցագործություն են (օրինակ՝ ցեղասպանությունը):

Բ) Միջազգային փաստաթղթերում որպես մարդկության դեմ հանցագործություն ճանաչված արարքները, ինչպես նաև ցեղասպանությունն ու խոշտանգումը – ճիշտ է: Որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն որակվում են ինչպես մարդկության դեմ հանցագործությունները, այնպես էլ այլ միջազգային հանցագործությունները, որոնց օբյեկտն է մարդկությունը, մասնավորապես՝ ցեղասպանությունն ու խոշտանգումը:

Գ) Միջազգային փաստաթղթերում որպես մարդկության դեմ հանցագործություն ճանաչված արարքները, ինչպես նաև մարդկության դեմ ուղղված՝ միջազգային պայմանագրերով քրեականացվող այլ արարքները – սխալ է: Միջազգային պայմանագրերով քրեականացվում են ոչ միայն միջազգային հանցագործությունները, այլև մի շարք այլ արարքները (այսպես կոչված միջազգային բնույթի հանցագործությունները, օրինակ՝ թմրամիջոցների թրաֆիքինգը), որոնք միջազգային հանցագործություն չեն: Նման արարքները չեն կարող համարվել մարդկության դեմ ուղղված հանցագործություն, քանի որ 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Զ» մասի համապատասխան դրույթը վերաբերում է բացառապես միջազգային հանցագործություններին:

Դ) ՀՀ քրեական օրենսգրքով որպես մարդկության դեմ հանցագործություն ճանաչված արարքները – սխալ է: 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Զ» մասի շրջանակներում արարքների որակումը պետք է իրականացվի միջազգային փաստաթղթերի շրջանակներում: Ուստի ՀՀ քրեական օրենսգրքի դրույթներն այս առումով չեն կարող ունենալ որևէ նշանակություն:

5. 1951 թ. Կոնվենցիայի իմաստով խաղաղության դեմ հանցագործություն է համարվում՝

Ա) Ագրեսիվ պատերազմն ու հրադադարի մասին պայմանագրի խախտումը – սխալ է: Հրադադարի մասին պայմանագրի խախտումը, եթե այն միաժամանակ չի հանդիսանում ագրեսիա, չի կարող համարվել խաղաղության դեմ հանցագործություն և առհասարակ միջազգային հանցագործություն: Այսպես, սահմանին ցածր ինտենսիվության զինված ուժի կիրառումը, առանձին բռնությունները, որպես կանոն, կխախտեն հրադադարի մասին առկա պայմանագրերը: Սակայն ցածր ինտենսիվության պատճառով դրանք չեն հասնում ագրեսիայի մակարդակի (ի տարբերություն լայնածավալ ռազմական հարձակման, որը ոչ միայն կխախտի հրադադարի մասին պայմանագիրը, այլև կհանդիսանա ագրեսիա):

Բ) Ագրեսիան, որը, որպես կանոն, կարող է իրականացվել պետության կամ պետականատիպ կառույցի բարձրաստիճան ղեկավարության կողմից – ճիշտ է: Վերաբերելի միջազգային փաստաթղթերի համաձայն՝ խաղաղության դեմ հանցագործություն է համարվում ագրեսիայի պլանավորումը, նախապատրաստումը, նախաձեռնումը կամ իրականացումը այնպիսի անձի կողմից, ով իր դիրքի ուժով արդյունավետ կերպով վերահսկում է պետության քաղաքական կամ ռազմական գործողությունները:

Գ) Ագրեսիան, որը համարվում է կատարված ագրեսիվ պատերազմում մասնակցող բոլոր անձանց կողմից – սխալ է: Վերաբերելի միջազգային փաստաթղթերի համաձայն՝ միջազգային հանցագործություն է համարվում ագրեսիայի պլանավորումը,

նախապատրաստումը, նախաձեռնումը կամ իրականացումը այնպիսի անձի կողմից, ով իր դիրքի ուժով արդյունավետ կերպով վերահսկում է պետության քաղաքական կամ ռազմական գործողությունները: Ագրեսիվ պատերազմի իրականացմանը ներգրավված այլ անձինք միջազգային իրավունքի տեսանկյունից չեն կարող ճանաչվել պատասխանատու ագրեսիայի համար:

Դ) Միջազգային խաղաղությունը վտանգող բոլոր արարքները – սխալ է: Միջազգային խաղաղությունը, ագրեսիայից բացի, կարող են վտանգել նաև այլ արարքները (օրինակ՝ միջազգային ահաբեկչությունը), որոնք, սակայն,միջազգային իրավունքում չեն ճանաչվում խաղաղության դեմ հանցագործություն:

6. 1951 թ. Կոնվենցիայի իմաստով ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարքներ են համարվում՝

Ա) Բարձրաստիճան պաշտոնյաների կամ կազմակերպված խմբերի ղեկավարների ցանկացած արարքները, որոնք հակասում են ՄԱԿ-ի կանոնադրությունում ամրագրված նպատակներին կամ սկզբունքներին: Լայն իմաստով՝ ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին կարող են հակասել նաև ոչ մեծ նշանակություն ունեցող արարքները (օրինակ՝ մարդու իրավունքների ցանկացած խախտում, ընդհանուր առմամբ, հակասում է ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի տարածման և քաջալերման նպատակին): Սակայն նեղ իմաստով՝ ՄԱԿ-ի հիմնական նպատակն է միջազգային անվտանգության ու խաղաղության պահպանումը: Ուստի արարքները, որոնք էապես չեն վտանգում միջազգային անվտանգությունն ու խաղաղությունը, չեն համարվի հակասող ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին :

- Բ) Բարձրաստիճան պաշտոնյաների կամ կազմակերպված խմբերի ղեկավարների արարքները, որոնք էապես ազդում են միջազգային անվտանգության ու խաղաղության պահպանման վրա, կամ լրջորեն խախտում են մարդու հիմնարար իրավունքները **- ճիշտ է**: Մի շարք պետությունների դատական պրակտիկայում հաստատվել է, որ այս բացառման հիմքը հարկ է կիրառել զգուշորեն, և տեսականորեն դրա տակ կարող են ընկնել միայն բարձրաստիճան պաշտոնյաների կամ կազմակերպված խմբերի ղեկավարների այնպիսի արարքները, որոնք էապես ազդում են միջազգային անվտանգության ու խաղաղության պահպանման վրա կամ լրջորեն խախտում են մարդու հիմնարար իրավունքները:

Գ) Միջազգային հանցագործությունները – սխալ է: Միջազգային հանցագործություններն ընդհանուր առմամբ ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարքներ են: Սակայն Կոնվենցիայում դրանք նախատեսված են որպես առանձին բացառման պայման: Ուստի Կոնվենցիայի իմաստով դրանք չպետք է դիտվեն որպես ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարքներ: Բացի այդ, որոշ միջազգային հանցագործություններ (օրինակ՝ ռազմական հանցագործություններ) կարող են կատարվել ցանկացած անհատի կողմից, մինչդեռ Կոնվենցիայի մեկնաբանությունների համաձայն՝ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարքներ կարող են իրականացվել միայն բարձրաստիճան պաշտոնյաների կամ կազմակերպված խմբերի ղեկավարների կողմից՝ շնորհիվ իրենց քաղաքական իշխանության (մինչդեռ այդպիսի իշխանություն չունեցող անհատներն օբյեկտիվորեն չեն կարող էապես վտանգել ՄԱԿ-ի նպատակների և սկզբունքների պահպանումը):

Դ) Միջազգային պայմանագրերով քրեականացվող արարքները, եթե դրանք ունեն ծանր հետևանքներ ու հակասում են ՄԱԿ-ի կանոնադրությունում ամրագրված նպատակներին կամ սկզբունքներին – սխալ է: Մի շարք պետությունների դատական պրակտիկայում հաստատվել է, որ նույնիսկ միջազգային պայմանագրերով քրեականացվող արարքները (միջազգային բնույթի հանցագործությունները, օրինակ՝ թմրամիջոցների թրաֆիքինգը),

չնայած դրանց ծանր հետևանքներին, չեն համարվի ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարքներ, քանի դեռ դրանք էապես չեն ազդում միջազգային անվտանգության ու խաղաղության պահպանման վրա կամ մարդու հիմնարար իրավունքների լուրջ խախտում չեն:

7. «Ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն» եզրույթի իմաստով՝ հանցագործությունը ծանր որակելու համար էական նշանակություն չունի՝

Ա) Արարքի բնույթը– սխալ է: Արարքի բնույթը միջազգային պրակտիկայում ճանաչված է որպես հանցանքի ծանրությունը որոշելու կարևոր գործոն:

Բ) Արարքի որակումը ապաստան հայցողի ծագման երկրում: – ճիշտ է: Ծագման երկրում արարքի որակումը հաճախ անձի՝ Կոնվոնցիայով նախատեսված հիմքերով հետապնդումների պատճառ է: Որոշ երկրներում ծանր հանցագործություն կարող է համարվել, օրինակ, խոսքի կամ հավաքների ազատության իրականացումը, ինչն ընդհանուր առմամբ հիմք է անձին փախստականի կարգավիճակ տրամադրելու (որպես քաղաքական հայացքների հիմքով հնարավոր հետապնդում), այլ ոչ թե դրա տրամադրումը բացառելու համար:

Գ) Արարքով պատճառված վնասը – սխալ է: Կոնվենցիայի մեկնաբանությունների համաձայն արարքով պատճառված վնասը համարվում է հանցանքի ծանրությունը որոշելու կարևոր գործոն:

Դ) Աշխարհի տարբեր երկրներում արարքի որակումը – սխալ է: Աշխարհի տարբեր երկրներում արարքի որակումը (այն է՝ արդյո՞ք այն որակվում է որպես ծանր հանցագործություն) հանդիսանում է հանցագործությունը ծանր որակելու համար կարևոր գործոն: Այս առումով էական նշանակություն կունենա արարքի որակումը ՀՀ քրեական օրենսգրքի շրջանակներում:

8. «Ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն» եզրույթի իմաստով՝ հանցագործությունը համարվում է «ոչ քաղաքական բնույթի» այն դեպքում, եթե՝

Ա) Չունի որևէ քաղաքական նպատակ – սխալ է: Քաղաքական նպատակների ու շարժառիթների բացակայությունը բավարար հանցանքը ոչ քաղաքական բնույթի համարելու համար: Սակայն նույնիսկ որոշակի քաղաքական շարժառիթների առկայությունը չի բացառում արարքը ոչ քաղաքական որակելը, եթե այն ակնհայտորեն անհամաչափ է հետապնդվող քաղաքական նպատակին:

Բ) Կապված չէ քաղաքական գործընթացների հետ – սխալ է: Արարքի որպես քաղաքական որակելը, առաջին հերթին, կախված է դրա նպատակներից ու շարժառիթներից: Քաղաքական գործընթացների հետ կապը ինքնին չի վկայում քաղաքական նպատակների կամ շարժառիթների մասին, և ուստի հանցագործությունը քաղաքական որակելու համար բավարար հիմք չէ:

Գ) Չունի որևէ քաղաքական նպատակ կամ ակնհայտորեն անհամաչափ է հետապնդվող քաղաքական նպատակին: – ճիշտ է: Քաղաքական նպատակների ու շարժառիթների բացակայությունը միանգամայն բավարար է արարքը ոչ քաղաքական բնույթի որակելու համար: Արարքը Կոնվենցիայի իմաստով չի համարվի քաղաքական նաև այն դեպքում, եթե ակնհայտորեն անհամաչափ է հետապնդվող քաղաքական նպատակին (մասնավորապես՝

զուգորդվել է պաշտոնյա կամ զինվորական չհանդիսացող անձանց հիմնարար իրավունքների խախտումներով), կամ դրա ու հետապնդվող քաղաքական նպատակի միջև չկա բավարար պատճառահետևանքային կապ:

Դ) Չունի որևէ քաղաքական նպատակ կամ որպես քաղաքական նպատակ ունի պետական հեղաշրջումը – սխալ է: Կառավարման համակարգի կամ կառավարության փոփոխությանն ուղղված հանցանքները (համաչափության պայմանով), որպես կանոն, համարվում են քաղաքական և չեն կարող համարվել բացառման հիմք:

9. Անձի մասնակցությունը բացառման հիմք հանդիսացող արարքներ իրականացնող խմբում կամ պետական մարմիններում համարվում է բացառման հիմք այն դեպքում, եթե այդ անձը՝

Ա) Տվյալ խմբում կամ մարմիններում ունի բարձրաստիճան դիրք – սխալ է: Անձի մասնակցությունը բացառման հիմք հանդիսացող արարքներ իրականացնող խմբում կամ պետական մարմիններում, նույնիսկ եթե նա այնտեղ զբաղեցնում է բարձր դիրք, բավարար չէ նրա նկատմամբ բացառման պայմաններ կիրառելու համար:

Բ) Տեղյակ է այդ խմբի կամ մարմնի կողմից համապատասխան արարքների իրականացման մասին – սխալ է: Նույնիսկ խնդրո առարկա արարքների մասին տեղյակ լինելը բավարար չէ անձի նկատմամբ բացառման պայմաններ կիրառելու համար, քանի դեռ անձն անձամբ չի մասնակցել այդ արարքներին կամ իր թողտվությամբ էապես չի նպաստել դրանց կատարմանը:

Գ) Գիտակցված մասնակցում է համապատասխան արարքների կատարմանը, կամ իր թողտվությամբ էապես նպաստում է դրանց կատարմանը – ճիշտ է: Անձնական պատասխանատվության սկզբունքի համաձայն բացառման պայմաններ կիրառելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձն ունենա գիտակցված մասնակցություն այդ արարքներին/գործողություններին, իսկ բարձրաստիճան պաշտոնյաների դեպքում՝ բավարար կլինի նրանց թողտվությունը, եթե այն հանդիսացել է համապատասխան հանցանքների կատարման կարևոր պայման:

Դ) Գիտակցված մասնակցում է համապատասխան արարքներին – սխալ է: Այդ արարքներին գիտակցված անձնական մասնակցությունը բացառման պայմաններ կիրառելու բավարար հիմք է: Սակայն բարձրաստիճան պաշտոնյաների դեպքում բավարար կլինի նաև նրանց թողտվությունը, եթե այն հանդիսացել է համապատասխան հանցանքների կատարման կարևոր պայման: Ուստի անձնական մասնակցությունը բացառման պայմանի կիրառման պարտադիր պայման չէ:

10. Երրորդ ապահով երկիր է համարվում այն երկիրը, որտեղ `

Ա) Չկա դաժան ու անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կամ կյանքի իրավունքի խախտման հիմնավոր վտանգ: – սխալ է: Երկիրը, որտեղ կա նման վերաբերմունքի կամ պատժի հիմնավոր վտանգ, միանշանակ չի կարող համարվել երրորդ ապահով երկիր: Սակայն դա երրորդ ապահով երկրի նկատմամբ միակ պահանջը չէ: Երրորդ ապահով երկիրն ընդհանուր առմամբ պետք է լիարժեք ապահովի 1951 թ. Կոնվենցիայով նախատեսված պաշտպանությունը՝ ներառյալ փախստականի կարգավիճակի տրամադրումը, հետապնդումների վտանգի բացակայությունն ու չվերադարձելիության սկզբունքի կիրառումը:

Բ) Չկա վտանգ, որ փախստականին կվերադարձնեն իր ծագման երկիր – սխալ է: Սա երրորդ ապահով երկրի նկատմամբ կարևոր պահանջ է, սակայն նաև անհրաժեշտ է, որ այդ երկրում

փախստականի կարգավիճակի տրամադրումն իրականացվիԿոնվենցիային համահունչ, ինչպես նաև չլինի Կոնվենցիայով նախատեսված հիմքերով հետապնդումների կամ դաժան ու անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կամ կյանքի իրավունքի խախտման հիմնավոր վտանգ:

Գ) Լիարժեք ապահովվում է 1951 թ. Կոնվենցիայով նախատեսված պաշտպանությունը – ճիշտ է: Երրորդ երկիրը փախստականի համար համարվում է ապահով, եթե այնտեղ լիարժեք ապահովվում է նրա՝ Կոնվենցիայով նախատեսված պաշտպանությունը: Դա առնվազն ենթադրում է Կոնվենցիային համահունչ փախստականի կարգավիճակի տրամադրում, հետապնդումների բացակայություն, չվերադարձելիության սկզբունքի պահպանում և դաժան ու անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կամ կյանքի իրավունքի խախտման հիմնավոր վտանգի բացակայություն:

Դ) Չկա վտանգ, որ 1951 թ. Կոնվենցիայով սահմանված հիմքերով փախստականը կենթարկվի հետապնդումների – սխալ է: Հետապնդումների վտանգի բացակայությունը, թերևս, երրորդ ապահով երկիր համարվելու կարևորագույն չափանիշն է: Սակայն նաև անհրաժեշտ է, որ այդ երկրում փախստականի կարգավիճակի տրամադրումն իրականացվի Կոնվենցիային համահունչ , պահպանվի չվերադարձելիության սկզբունքը, ինչպես նաև չլինի դաժան ու անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կամ կյանքի իրավունքի խախտման հիմնավոր վտանգ: